

Իրանահայ համայնք

**Մեծ եղեռնի 95-ամյակը հիմ «Րաֆֆի»
համալիրում**



2010թ. ապրիլի 30-ին, Թեհրանի ՀՄՍ «Րաֆֆի» համալիրի մեծ դահլիճում կազմակերպվել էր հատուկ ձեռնարկ Հայոց Ցեղասպանության 95-ամյակի առիթով, ուր ներկա էին ԻԻՀ-ում ՀՀ լիազոր եւ արտակազ դեսպան Գրիգոր Առաքելյանը, դեսպանության մշակութային կցորտ՝ Սուրեն Գասպարյանը, համայնքային մարմինների, միությունների եւ մամուլի ներկայացուցիչներ, ուսուցիչներ եւ հոծ թվով բազմություն: Հանդիսատեսի դիմաց ծառայած էր հսկայական մի հուշակոթող՝ Սարգսրապատ: Այնքան բնական էր ու նման իսկականին, որ միայն կարելի էր շշմել: Բեմահարդար՝ Հայկ Խաջավյանի վարպետ ձեռքերն ու արվեստաշատ մտքի համգործակցությունը տվել էին իրենց նոր, իրանահայ կյանքում աննախադեպ, պտուղը: Վարձքը ի կատար, սիրելի Հայկ: Ձեռնարկն սկսվեց Տերունական աղոթքով, ապա սկսուտական շքերթ՝ սկսուտները մարջի ներքո հարգանքի քայլվածքով հասան բեմի կենտրոն որտեղ մի ծաղկեկողով տեղադրեցին նահատակների հիշատակին ու խաղաղ հեռացան: Այնուհետ ամբիոնին մոտեցավ միության Մշակութային բաժանմունքի պատասխանատու տկն. Վալորիկ Քելշիյան-Ամիրյանը՝ բացման խոսքն ասելու համար: Նա իր խոսքերում ի միջի այլոց ասաց, «Այս օրերին, երբ հայությունը աշխարհի բոլոր ծայրերում ոգեկոչում է Հայոց Ցեղասպանության նահատակների հիշատակը ՀՄՍ «Րաֆֆի» համալիրը նաև իր պարտքն է համարում միանալ իր ծնող ժողովրդին ու հարգանքի գլուխ խոնարհել մեր անթաղ զոհերի հիշատակի առջեւ»:

Ապա բեմ հրավիրվեց միության «Մեղեդի» երգչախումբը, խմբավարությամբ տկն. Ջարուհի Ենգոյանի, իսկ մեներգով հանդես եկավ տկն. Վիկտոր Ամիրյանը, որին նվագակցում էին գիտառով Համլետ Խոդադադյանը եւ շվիով տկն. Ջարուհի Ենգոյանը: Ապա միատեղ բեմ հրավիրվեցին օրվա բանախոսները:

Առաջին բանախոսը վաստակավոր ուսուցիչ Հարութ Քելշիյանն էր: «Մեծ եղեռնը եւ նրա ճանաչումն ու դատարարությունը» խորագրով: Այնուհետ «Հայոց մշակութային ցեղասպանությունը եւ նրա հետեւանքները» խորագրի ներքո բանախոսեց գրող, Հայկական բարեգործական ընդհանուր միության Թեհրանի մասնաճյուղի նախագահուհի տկն. Աստղիկ Բաբայանը: Երրորդ բանախոսը Արաքս Թերթի խմբագիր Մովսես Քելշիյանն էր: Նա հաստատելով նախորդ զեկուցողների խոսքերը, ասաց, «Ինչպես արդեն ճշգրտորեն ներկայացրին հարգելի համազեկուցողները՝ 1915-ից դեռ տարիներ առաջ սկիզբ առած Հայոց Ցեղասպանությունը շարունակվեց մինչև 1923թ.: Իսկ երբ Արեւմտյան Հայաստանը

ամայացավ իր բնիկ ժողովրդից, այնուհետ սկսվեց մշակութային ջարդը՝ փլեցին հայոց վանքն ու եկեղեցին, դպրոցն ու տունը եւ չանցան նույնիսկ գերմանաանից, տապանից ու խաչքարից: Եվ այդ բոլորը միայն մեկ նպատկով՝ վերջակետ դնել Հայոց Հարցին, Հայոց Հողապահանջին»: Բանախոսությունից հետո գեղարվեստական բաժինը շարունակվեց միության «Անի» պարախմբի կատարումներով՝ «Անի» եւ «Ադանա» պարերով, խմբի նոր պարուսույց տկն. Կարինե Մանուչերյանի ղեկավարությամբ, որը եւ մեծ բավարարություն պարգևեց հանդիսատեսին: Այնուհետ հերթն հասավ ասմունքողներին: Վերջում բեմ հրավիրվեց Իրանում Հայաստանի Հանրապետության լիազոր եւ արտակարգ դեսպան Գրիգոր Առաքելյանը, օրվա առիթով իր խոսքն ասելու համար: ՀՀ Դեսպանը, նաև իր հերթին, հիշեցնելով, որ այս օրերին հայությունը ողջ աշխարհում՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում գլուխ է խոնարհում իր անմեղ զոհերի հիշատակի առջեւ, ասաց, «Հայաստանի Հանրապետությունը Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը իր համար ռազմավարական է համարում եւ մեր ժողովուրդը երախտապարտ է բոլոր այն պետություններին, որոնք ճանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանության փաստը եւ կոչ է անում աշխարհի մյուս պետություններին եւս, կանխարգիլելու համար նման ոճիրները, ճանաչել եւ դատապարտել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»:

Ծրագիրն ավարտվեց բոլոր իրականացնողների բեմ դուրս գալով եւ «Սարգսրապատ» երգով, որին ձայնակցեց նաև հանդիսատեսը: Հիշատակելի է ծրագրի նախակցում էկրանի վրա ցուցադրվեց Արմին Վեզնեի կողմից Հայոց Ցեղասպանության օրերին առնված լուսանկարներից եւ նամակներից պատրաստված՝ Տիգրան Խզմայանի փաստագրական տեսաժապավենը:

**Իրանում տեղի են ունեցել Ցեղասպանության
95-ամյա տարելիցին նվիրված
միջոցառումներ**

ԵՐԵՎԱՆ, 26 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Հայ առաքելական եկեղեցու Թեհրանի թեմի առաջնորդարանում ապրիլի 23-ին մեկնարկվել են Հայոց Ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված կենտրոնական միջոցառումները: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, մասնավորապես, ապրիլի 23-ի երեկոյան Մեծ Եղեռնի զոհերի հուշակոթողի մոտ տեղի է ունեցել հոգեհանգստյան արարողություն, որը վարում էր Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանը:

Այնուհետև տեղի է ունեցել ծաղկեմատույց, որի ընթացքում թեհրանահայ համայնքի ազգային իշխանությունների, 40-ից ավելի միությունների եւ դրանց կից կառույցների ներկայացուցիչներ, Իրանի խորհրդարանում հայազգի պատգամավոր Գեւորգ Վարդանյանը, ինչպես նաև Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելյանը ծաղիկներ են դրել Հայոց Մեծ Եղեռնի հուշարձանին: Միջոցառմանը մասնակցել են իրանահայ մտավորականներ, ազգային-հասարակական գործիչներ, հայ համայնքի տարբեր խավերի ներկայացուցիչներ: Այնուհետև Թեհրանի թեմի առաջնորդ Ս.Սարգսյանի կոչով՝ հավաքված ժողովուրդը, մասնավորապես, երիտասարդությունը, ոտքով ուղեւորվել են Թեհրանի «Ն. Գյուլբենգյան» հայկական դպրոց, որտեղ տեղի է ունեցել երիտասարդական գլխավոր հավաքը: Հաջորդ օրը՝ ապրիլի 24-ին, Թեհրանի հայոց թեմի առաջնորդարանում Սր. Սարգիս

եկեղեցում, մատուցվել է պատարագ, ապա տեղի է ունեցել Թեհրանի հայոց թեմի հիմնական բողոքի համահավաքը:

Համահավաքին ելույթներով հանդես են եկել Իրանի խորհրդարանում Թեհրանի եւ հյուսիսային իրանահայության պատգամավոր Գեուրգ Վարդանյանը, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ Սարգսյանը, ինչպես նաև այլ իրանահայեր: Ապրիլի 24-ին, ուշ երեկոյան Թեհրանի «Արարատ» մարզավանում տեղի է ունեցել Թեհրանում Հայոց Տեղասպանության տարելիցին նվիրված գլխավոր միջոցառումը, որտեղ ելույթ է ունեցել ՀՀ դեսպան Գրիգոր Առաքելյանը: Նա իր ելույթում երախտիքի խոսք է հայտնել աշխարհի բոլոր այն երկրներին, որոնց խորհրդարանները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Երախտիքի խոսք է ասվել նաև Իրանին՝ Տեղասպանության միջազգային ճանաչմանն աջակցելու եւ դրա ոգեկոչմանը նվիրված միջոցառումների անցկացմանը նպաստելու համար: Ավելի քան 700 հոգու մասնակցությամբ տեղի ունեցած արարողության ընթացքում նաև տեսաուցադրվել են տարբեր դրվագներ՝ վերցված Տեղասպանության եւ տեղահանության դեպքերից, որոնք ուղեկցվել են Հրանտ Դինքի սպանությունը եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներկայիս գործընթացը պատկերող որոշ տեսադրվագներով: Նմանօրինակ միջոցառումներ են կազմակերպվել նաև Իրանի մյուս հայաշատ քաղաքներում:

«Արամ Մանուկյան» սրահի վաճառքի հարցը

Ավելի քան հարյուրամյա, «Քուշեշ» դպրոցի փակվելուց հետո «Արամ Մանուկյան» սրահի վաճառքի հարցը իրանահայ իրականությունում դարձավ ամենաքննարկվող թեմաներից մեկը: Հայ արհեստավորների միությունը, որը շուրջ 15-ամյա պատմություն ունի, որոշակիորեն ըմբռնելով ազգային իշխանությունների տնտեսական բարդ իրավիճակից դրդված վարվող քաղաքականությունը, որն է .արամե սրահի եւ նրան կից դպրոցի վաճառքը, միութենականների կողմից մեծ դժգոհության տեղիք է տվել եւ, իհարկե, նրանց ցասունը հասկանալի է՝ դժվար է բաժանվել քեզ արդեն հարազատ դարձած միջավայրից: միության վարչության անդամները հիմնականում շեշտադրեցին իրենց այն տեսակետ-առաջարկը, որ եթե հնարավոր է, Թեմական խորհուրդը առանձնացնելով կարվածի սեփականության փաստաթղթերը, վաճառքի միայն տարածքի դպրոցի բաժինը, իսկ սրահը թողնի միութեանը: Այս առաջարկը նրանք ներկայացրել են Թեմական խորհրդին, բայց նրանց փոխանցվել է, որ սեփականության փաստաթղթերի առանձնացման գործառույթը հնարավոր չէ՝ պետությունում առկա գործող օրենսդրական դրույթների առումով, բայց Արհեստավորների միության մի հատված դրանում համոզված չլինելով՝ պնդում է, որ հնարավոր է եւ գոնե ազգային իշխանությունները իրենց այդ առաջարկին ընդառաջեն: այն հարցին, թե ինչու երբ նրանց առաջարկ է եղել գնել սրահի այդ հատվածը, նրանք չեն ընդունել, վարչության անդամ Հակոբ Հակոբյանը ճշտելով հարցադրումը՝ նշեց, որ կանխավ առաջարկի նախաձեռնողը իրենք են եղել եւ ոչ՝ Թեմական խորհուրդը. «մենք նախապես տղաներից մի քանիսի հետ խոսեցինք, որ եթե մենք կարողանանք սրահի մասը վերցնել, լավ կլինի, բայց, դժբախտաբար, տարբեր խնդիրներ կային. մեկը, տնտեսական ճգնաժամի այս իրականությունում չէինք կարող, մյուսն էլ, որ մտածեցինք՝ այդ դեպքում արդեն անհրաժեշտ կլինի, որ 15-20 հոգի դրամ ներդնեն եւ արդեն կլինի մի անձնական կառույց եւ միության կարգավիճակից դուրս կգա: Դրանք էին հիմնական շարժառիթներն այս հարցում, որ պատճառ եղան մեր ոչ-հետեւողականության, բայց կրկին կլինի այս առաջարկը վերանայել: վարչության նախագահ արն. Շահբազյանն էլ շարունակելով թեման՝ նշեց, որ նկատի առնելով ներկա տնտեսական պայմանները, արհեստավորները չունեն այդ հնարավորությունները, որպեսզի կարողանան այդ սրահը գնել: .եթե այս ներկա տնտեսական

իրավիճակը չլիներ, որը տիրում է ողջ աշխարհում եւ որից, ցավոք, անմասն չենք նաեւ մենք, եթե այս վիճակը չլիներ, մենք կընդառաջեինք այս առաջարկին, մենք ինքներս էլ էինք մտածել, որ կարելի է այդ գործը անել, բայց ներկա պայմաններում մենք կարծում ենք, որ սա հնարավոր չէ, ապագայում եթե պայմանները թույլ տան եւ փոփոխություն՝ դրական տեղաշարժ լինի, գուցե մենք կարողանանք դա իրականություն դարձնել, բայց, ինչպես արդեն նշեցի, ներկա պայմաններում մեր արհեստավորները չեն կարող, որովհետեւ իսկապես գործի եւ եկամուտի տեսակետից իրավիճակը շատ վատ է եւ ի վիճակի չեն ներկա արժեքներով գնել: Եթե Թեմական խորհուրդը համաձայնվի սրահը հանձնել մեր արհեստավորներին եւ մենք մասնավորաբար կամաց-կամաց կարողանանք վճարել գումարը եւ գնել իրենցից, սա էլ մի տեսակետ է, որը կարելի է ուսումնասիրել եւ գործադրել ու մի խնդիր չէ, որ ես ասեմ՝ անհնարին է, ոչ, դա հնարավոր է, բայց ոչ միանգամից՝ ներկա պայմաններում: եւ այստեղ է, որ խաչածեղիվում են տնտեսական ճգնաժամի հետեւանքներից բխող պատճառներն ու գալիս հանգում են մի մեկնակետի ու թեկուզ եւ գաղափարների եւ գործողությունների պայքար կա այսօր միություն-թեմական խորհուրդ, բայց խորքում այդ պայքարը նույնաման է եւ ինչպես իր խոսքում նշեց Արա Շահնազարյանը, երանի թե համայնքային նյութական իրավիճակը այնպիսին լիներ, որ Թեմական խորհուրդը հնարավորություն ունենար՝ բոլոր միությունների ցանկությունը բավարարելու: Բայց, ինչելիցե, ներկա իրավիճակում այս վերը նշված տարբերակը հիմնավոր պատճառներով մղվել է հետին պլան եւ կառչած մնալով միութենական համընդհանուր գաղափարին՝ առաջ է քաշվում սրահի մասնաբաժնի վաճառքի կասեցման այս գաղափարը:

Վարչության կողմից մտահոգություն արտահայտվեց, որ եթե սրահը վաճառվի, ապա միությունն էլ կմասնատվի եւ հետո դժվար կլինի կրկին համախմբել նրանց, բայց միաժամանակ իրենք էլ հենց պատասխանեցին իրենց կողմից բարձրացված հարցին, որ եթե դրսևորվի անհրաժեշտ կամք, ապա կարողանան հեշտությամբ հաղթահարել յուրաքանչյուր խոչընդոտ: Ամբողջացնելու համար այս տարակարծությունների ընդհանուր միտքը՝ նշեց, որ Թեմական խորհրդի կողմից Արհեստավորների միությանը առաջարկվել է, որպեսզի իրենց հավաքատեղին որպես միություն՝ փոխադրեն .նայիրիե միությանը հարկի տակ, ուր անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար՝ կտրամադրվեն նաև ֆինանսական միջոցներ: Եւ կարծում ենք՝ Թեմական խորհուրդն էլ հավատարիմ իր խոստմանը՝ կանի ամեն ինչ միության կողմից բարձրացված հարցերին լուծումներ տալու ուղղությամբ: Եւ, վերջապես, այս բոլորի ամբողջացումը ցանկանում ենք պարփակել մի համատեքստում, որն է՝ եւ՝ Թեմական խորհուրդը, եւ՝ Արհեստավորների միությունը գան միասնական մեկ եզրույթով: այն կդառնա չարչրկվող եւ չարաշահումների ենթակա մի թնցուկ:

Կյանքից հավերժ հեռացավ ԱԹ առաջնորդ Տ. Նշան եպիսկ. Թովուզյանը



Խոր ցավով իմացանք, որ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Նշան եպիսկ. Թովուզյանը, ապրիլի 27-ին, Երևանում, կարճատև հիվանդությունից հետո, հավերժորեն փակել է աչքերը: Ըստ Թավրիզից ստացած մեր տեղեկությունների, հոգեւոյս Սրբազան Հոր դին շաբաթ

ապրիլի 31-ին տեղափոխվելու է Թավրիզ, իսկ կիրակի մարտի 1-ին հատուկ արարողությունից հետո կատարվելու է թաղումը: Իրանահայեր Լրատու ցանցի-ի հաղորդմամբ այս տխուր աշիթով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, ապրիլի 28-ին, հրապարակել է հատուկ մահագույժ, ուր ի մասնավորի ասված է. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանը զուժում է վախճանումը Ատրպատականի հայոց թեմի տարիների հոգեւոր առաջնորդ ՀՈԳԵՆՈՒՅՍ Տ. ՆՇԱՆ ԵՊՍ. ԹՈՓՈՒԶՅԱՆԻ, որը պատահեց ապրիլի 27-ին, Երեւանում, հետ կարճատես հիվանդության:

Շայաստան

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՎԱՆԴԻ ՐԱՄԱՐ

Նախագահ Սերժ Սարգսյանն ապրիլի 10-ին հրամանագիր է ստորագրել Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած անձանց մրցանակ շնորհելու մասին: Այս մասին հայտնեցին ՀՀ նախագահի մամուլ գրասենյակից:

Նախագահի հրամանագրով 2009 թվականի մրցանակ է շնորհվել Վիլյամ Շաբասին (Իռլանդիա)՝ Հայոց ցեղասպանության գիտական հիմնավորման եւ դրա ժխտմանը հակազդելու նախաձեռնությունների համար, Սարգիս Շահինյանին (Շվեյցարիա)՝ Շվեյցարիայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման գործընթացը նախաձեռնելու եւ դրա ժխտումը քրեորեն հետապնդելի դարձնելու գործում ունեցած ավանդի համար:

«ՔՐՈՋՍ ՈՒ ՆՐԱ ԱՂՋՎԱՆ ՄԵՐԿԱՅՐԻՆ, ԲԵՆՁԻՆ ԼՅՐԵՑԻՆ ՈՒ ՎԱՆՅԻՆ»



Մարաղայի ողբերգությունից անցել է 18 տարի

Լեռնային Ղարաբաղի ամենամեծ բնակավայրերից մեկը՝ Մարաղան, ղարաբաղյան շարժման առաջին օրից կանգնեց վտանգի առաջ: 1992 թ. ապրիլի 10-ին աղբյուրների օժնակալները ներխուժեցին, ավերեցին ու հրկիզեցին գյուղը: Դաժան կոտորածներից սպանվեց շուրջ 100 մարդացի: Շատերը սպանվեցին փախուստի ճանապարհին: 63-ը գերեվարվեցին, որոնցից 9 երեխաներ էին: Նրանցից 7-ը վերադարձվել են, 17-ը՝ փոխանակվել, մեկին կարողացել են գումարով հետ բերել, մյուսն էլ հաջողացրել է փախչել: Ավելի ուշ տեղեկություններ ստացվեցին 8 հոգու սպանության մասին: 29-ի ճակատագիրը մինչ այսօր հայտնի չէ:

«Այրյան գաղջ հոտը բռնել էր շուրջբոլորը: Թուրքերը հրդեհեցին գյուղը: Երեք ժամ անց Մարաղան վերածվեց այրվող հսկայական թոնրատան: Անճանաչելիորեն խոշտանգվել էին բազմաթիվ մարաղացիներ, գյուղի բնակիչների մի ստվար մասը գերվել էր... Սպանող շարունակվեց հինգ ժամ: Նրանք գլխատեցին դպրոցի տնօրեն Երվանդ Հովակիմյանին եւ նրա տիկնոջը, ապա մարմինները զցեցին խարույկի մեջ»:

Մարաղայի ողբերգությունից հրաշքով փրկվածներից Վալյա Խաչիկյանը հետագայում հիշում էր, որ գյուղի ռմբակոծությունը սկսվեց ապրիլի 9-ի երեկոյան: «Արկերը պայթում էին գրեթե ամեն վայրկյան: Գյուղում 3000 արկ է պայթել: Այդ ժամանակ ես եւ ամուսինս գտնվում էինք նկուղում, ուր ապրում էինք արդեն երեք տարի: Նրանք, ովքեր չկարողացան լքել գյուղը,

մորթվեցին, այրվեցին, գերեվարվեցին: Իսկ փախչողների դժոխային ճանապարհ էր սպասում՝ ռմբակոծությունների ներքո»:

Սարգսյան Կարինեն պատմում էր, որ Մարաղայի ուղղությամբ առաջին կրակոցները սկսվել էին հունվարին: «Ապրիլին այդ կրակոցները շատացան, ու մենք թաքնվեցինք նկուղում: Մի քանի օր անց տեսանք, որ աղբյուրներից գյուղում են: Ես լսում էի, թե ինչպես էր մի կին աղաչում, որ իր երեխաներին ձեռք չտան: Նրա գլխին հարվածեցին, եւ նա ուշագնաց ընկավ: Հետո ես իմացա նրա անունը՝ Ջաբել: Պարզվեց, որ երեխաների աչքի առաջ մայրը սպանվել է տանկի անիվների տակ: Նրանք իմ երեխաներին էլ գողացան, ես կորցրեցի ու էլ նրանց չտեսա: Ինձ զցեցին «Ժիզուլի» մեքենայի մեջ ու տարան Բարդա: Ջարթնեցի Բարդայի ոստիկանության շենքում... Էլ ոչինչ չեմ հիշում, հիշում եմ մարդկանց լացը, շատերը խելագարությունից ոռնում էին»:

«Քրոջս ու նրա աղջկան մերկացրին, բենզին լցրեցին ու վառեցին: Նույն կերպ սպանեցին Փառաճեմին, Վարդանուշին, Բագրատին, Ժորային: Այդ օրը Մարաղայում բազմաթիվ անմեղ մարդիկ մահացան», հիշում էր Նուշիկ Աղաջանյանը:

«Երբեք չեմ մոռանա այն ահավոր օրը, երբ աղբյուրներից հարձակվեցին Մարաղայի վրա: Բնակիչներն անպաշտպան էին, նրանք գրեթե ոչինչ չունեին թշնամուն դիմակայելու համար: Տեսա երիտասարդ տղայի, որ փորձում էր աղբյուրների տանկի դեմ անմեղ օդակայանից հրացանի օգնությամբ: Տեսել եմ, թե ինչպես են աղբյուրներից գլխատում մարդկանց, տեսել եմ վառված դիակներ: Շատերին նրանք կենդանի վառել էին: Նրանք նախ թալանում էին հայերի տները, հետո հիմնահատակ քանդում ու վառում»:

Սրանք էլ Քվինսբուրգի բարոնուհի Քերոլայն Քոքսի հիշողություններն են:

Ողբերգությունից անցել է 18 տարի, սակայն միջազգային հանրությունը Մարաղայի, Բաքվի, Սունգայիթի ջարդերի վերաբերյալ համարժեք գնահատական չի տվել:

Մինչդեռ աղբյուրական կողմը, հավատարմի մնալով իր ցեղասպան ձեռագրին, Մարաղայի կոտորածը իրագործելու համար «Աղբյուրների ազգային հերոս» կոչում շնորհեց «Գուրթուլուշ» զինվորական ստորաբաժանման հրամանատար Շահին Թալիբօղլի Թազիբին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Ազգ», Երեւան

ՄԱՅԻՍԻ 9 ՄԵՐ ՀԱՂՔԱՆԱԿՆԵՐԻ ՕՐՆ Է



Մայիսի 9-ին լրանում է Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակի 65-րդ ամյակը եւ Շուշիի ազատագրման 18-րդ տարեդարձը: Հայրենական մեծ պատերազմի տարեդարձը, որը Հայաստանի անկախությունից հետո որոշ վայ-հայրենասերների կողմից դուրս էր մղվել մեր իրականությունից եւ միայն վերջին տարիներին է նորից նշվում, եւ հիշվում են Հայրենական մեծ պատերազմի վետերանները, նրանց արժանին մատուցվում: Հարգանքը Հայրենական պատերազմում ընկած հերոսների եւ վետերանների նկատմամբ մեզ համար իսկապես կարելու է, եւ պնդումները, թե դա ուրիշի պատերազմ էր, իսկ մենք այնտեղ միայն զոհ էինք, ոչ միայն սխալ են, այլեւ լուրջ մոլորություն, ինչը պետք է արմատախիլ անել: Փորձենք հասկանալ, թե որն էր այդ պատերազմի ու նրա հաղթանակի կարեւորությունը մեր ժողովրդի կյանքում:

Գաղտնիք չէ, որ այդ տարիներին Թուրքիան ակնդետ հետեւում էր ԽՍՀՄ-ի տարածքում ընթացող մարտերին եւ Մոսկվայի մոտ կամ Ստալինգրադում խորհրդային բանակի պարտության դեպքում իր զորքերը կմտցներ Չայաստան: Բացատրել թուրքական այդ ներխուժման հետեւանքները հայ ժողովրդի համար, կարծում եմ, ոչ մեկին էլ պետք չէ: Չտեսւաբար խորհրդային բանակի հաղթանակն այդ պատերազմում մեզ՝ հայերիս համար ռազմավարական կարեւոր նշանակություն ուներ:

Այդ պատերազմը կարեւոր էր հայ ժողովրդի համար նաեւ մեկ այլ տեսանկյունից: Չայրենական մեծ պատերազմին մասնակցեցին աննախադէպ թվով, մոտ 500 հազար, հայ զինվոր եւ սպա: Չայ ժողովրդի զանգվածային մասնակցությունն այդ պատերազմին փոխեց հայերի մասին մինչ այդ եղած այն կարծիքը, թե մորթվողների ազգ ենք եւ ի վիճակի չենք կռվելու: Ի դեպ, այդ կարծիքը գերիշխող էր ոչ այնքան օտարի, որքան հենց հայերիս մեջ: Ժողովուրդն ինքն իր համար բացահայտեց, որ կարող է ոչ միայն կռվել, այլեւ հաղթել եւ հզոր հրամանատարներ տալ: Բաղրամյան, Բաբաջանյան, Խամփերյանց, Իսակով եւ շատ այլ ազգանուններ բոլորի շուրթերին էին, եւ սա մոր տեսակի, եթե կուզեք՝ մոր որակի հայի ծնունդ էր, հայի, որ հավատում է իր ուժերին եւ որը կարող է հաղթել նույնիսկ հզոր թշնամուն: Այսինքն, Մեծ հայրենականը մեզ հայերիս համար ավարտվեց, կարելի է ասել, կրկնակի հաղթանակով՝ մեկը՝ թշնամու, մյուսն՝ ինքներս մեր նկատմամբ, երբ վերջնականապես մեր վրայից ջնջեցինք մորթվողի խարանը, սա մոր բացահայտում էր եւ մոր վերածնունդ: Եվ հետագա մեր հիմնական ճակատարմարտին՝ Արցախյան հերոսամարտին մենք եկանք Չայրենական մեծ պատերազմում մեր պապերի տարած հաղթանակների ու նրանց հերոսության ժառանգությունը մեր ուսերին կրելով: Չայ տղաները սահմանը պաշտպանելու կամ արցախյան ճակատ էին գնում համոզված, որ այդ հաղթանակը մերն է լինելու: Պարտվելու կամ նահանջելու մասին անգամ խոսք չիմեղ չէր կարող, իսկ անհաջողություններն էլ միայն ժամանակավոր էին, եւ բոլորը համոզված էին, որ շուտով լինելու է մեր Ստալինգրադը:

Չտեսւաբար մայիսի 9-ի Բեռլին մտած խորհրդային զորքերը հայկական զորամասերի հետ միասին կերտեցին նաեւ մեր ժողովրդի ապագա հաղթանակները, այսինքն՝ այդ օրը նաեւ մեր ժողովրդին է: Եվ մայիսի 9-ին արժե գլուխներս մեկ անգամ եւս խոնարհել Չայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների շիրիմներին եւ հարգել վետերաններին:

ԲԱՅՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ԶԵԿԸ

ԵՐԵՎԱՆ, 21 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ներկա է գտնվել Երևանի համակցված շոգեզագային ցիկլով էլեկտրակայանի բացման արարողությանը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամուլի գրասենյակից, նախագահը շրջել է էլեկտրակայանի տարածքում, ծանոթացել էներգաբլոկի շահագործման տեխնիկական փուլերին: Էլեկտրակայանի շինարարությունը մեկնարկել էր 2008թ. հուլիսին: Այն կառուցվել է Միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի տրամադրած 247 մլն ԱՄՆ դոլար վարկով: Էներգաբլոկի շինարարությունն

իրականացրել են ճապոնական եւ կորեական մասնագիտացված ընկերություններ: Նոր ջերմաէլեկտրակայանի շահագործումը հնարավորություն կտա բարձրացնելու ՀՀ էներգահամակարգի հզորությունն ու հուսալիությունը, նվազեցնելու էլեներգիայի կորուստներն էլեկտրական ցանցերում: Ջերմաէլեկտրակայանը կունենա զգալիորեն ցածր արտանետումներ:

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԼՈՒՐՋ ՍՊԱՌՆԱԼԻԶՆԵՐ ԶԵՆ ՍՊԱՍԿՈՒՄ

«Վերջին տարիներին Չայաստանն Իրանի կողմից դիտվում է որպես քաղաքական եւ տնտեսական կարեւոր գործընկեր, ասաց Սեւակ Սարուխանյանը,- Չայաստան-Իրան գազատարի կառուցումից, նաեւ Չայաստան-Իրան երկաթգծի կառուցման վերաբերյալ քննարկումներից հետո Չայաստան-Իրան հարաբերությունները թեւակոխել են մոր փուլ, որն առավելապես բնորոշվում է տնտեսական համագործակցության զարգացմամբ»:

Իրանի՝ Լեռնային Ղարաբաղի բանակցությունների գործընթացում միջնորդ դառնալու ցանկությունը Սեւակ Սարուխանյանը չի համարում անհնարին, սակայն կարծում է, որ անհրաժեշտ չէ Իրանին ներքաշել որպես միջնորդի: «Քանի որ գոյություն ունի ԵԱՀԿ Մինսկի խումբ, որը Չայաստանի համար առաջարկում է օպտիմալ բանակցությունների ձեւաչափ, հետեւաբար Մինսկի խմբի մենաշնորհից հրաժարվելը մեզ համար ձեռնտու չի լինի,- ասաց իրանագետը,- Ադրբեջանն Իրանի միջնորդության վերաբերյալ արդեն տվել է իր նախնական դրական եզրակացությունը, սակայն Չայաստանի համար Իրանի միջնորդությունը զուտ քաղաքական տեսակետից շահավետ չէ, որովհետեւ դրանից հետո Թուրքիան նույնպես որպես միջնորդ կարող է ներքաշվել բանակցային գործընթացի մեջ»:

Սփյուռք

ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԶՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ՝ ՄԵԿ ԿԱՅՔՈՒՄ

Ֆրանսահայ անկախ լրագրող ժան Էսքիյանն առաջարկում է Չայոց ցեղասպանության բոլոր զոհերի անունները գրանցել www.inhohome.com կայքին: Էսքիյանն այս կապակցությամբ նշել է. «Տեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ ես ամբողջ աշխարհի հայերին առաջարկում եմ բոլոր զոհերի անունները գրանցել www.inhohome.com հուշամատյանում: Սա բոլոր նրանց բարոյական պարտքն է, ովքեր հիշում են եւ կարող են տեղադրել մարդկության դեմ գործված հանցանքի զոհ դարձած իրենց ընտանիքների անդամների անունները»:

Նախաձեռնությունն անցկացվում է Շառլ Ազնավուրի հովանու ներքո:

Պատմության մեջ առաջին անգամ Ստամբուլում Ապրիլի 24-ին հարգեցին զոհված հայերի հիշատակը

Ստամբուլի Թաքսիմ հրապարակում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակն են հարգել մոտ 300 թուրք մտավորականներ:

Հրապարակում խիստ հսկողություն էին իրականացնում ոստիկանները, քանի որ ակցիայի կազմակերպիչները բազմաթիվ

սպառնալիքներ էին ստացել ազգայնականներից և դիմել իրավապահ մարմիններին իրենց պաշտպանելու խնդրանքով:



Հիշատակի արարողությունը լուռ է անցել, հավաքվածները վառել են մումեր և ծաղիկներ նետել օդ: Ավելի ուշ, սակայն, Իստիկլալ պողոտայով անցնելիս երթի մասնակիցները վանկարկել են «Հայերի, թուրքերի և քրդերի եղբայրություն», «Ուս ուսի ընդդեմ ֆաշիզմի» կարգախոսներ:

Նշենք, որ նույն ժամին Թաքսիմ հրապարակին մոտեցել է ցուցարարների փոքրաթիվ մեկ այլ խումբ՝ փորձելով հակացույց անցկացնել: Ոստիկանները, սակայն, նրանց թույլ չեն տվել հրապարակ մտնել:

Հասարակական

ԻՆՉ Է ՀԵՏԵՎԵԼՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ



Արա Աբրահամյան. ժամանակն է, որ Ցեղասպանության հարցով Հայաստանը դիմի միջազգային դատարան

Ներկայացնում ենք Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի հարցազրույցը «Ազգ» օրաթերթին, որտեղ անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի համատեքստում վերջին իրադարձություններին:

- Պրն Աբրահամյան, ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ապրիլի 24-ի ուղերձում չօգտագործեց «ցեղասպանություն» բառը, բավարարվելով միայն «մեծ եղեռն» արտահայտությամբ: Որքանով է իրատեսական, որ ԱՄՆ նախագահը երբևէ փաստերը կկոչի իրենց անուններով:

- Մենք բոլորս, առաջին հերթին ամերիկահայերը, սպասում էինք, որ ԱՄՆ նախագահը կօգտագործեր «ցեղասպանություն» բառը: Բայց այն, որ Օբաման խուսափեց դրանից, ես հանգիստ եմ ընդունում, քանի որ պատճառներն ինձ համար հասկանալի են: Թուրքիան Միացյալ Նահանգների ռազմավարական գործընկերն է, բացի այդ՝ ԱՄՆ-ը խնդիրներ ունի կապված Իրանի, Աֆղանստանի, Իրաքի հետ, քանի որ այդ հարցերում առկա է Թուրքիայի աջակցությունը: Պակաս կարելու չէ նաև ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցությունը: Այսինքն, Ցեղասպանության ճանաչման հարցը այսօր Միացյալ Նահանգներում քաղաքականացված է, և ԱՄՆ նախագահը այդ հարցում ելնում է երկրի պետական շահերից: Այնուամենայնիվ, ԱՄՆ նահանգների մեծ մասն արդեն ճանաչել է Ցեղասպանության փաստը, և հույս ունեմ, որ կգա մի օր, եւ ԱՄՆ-ը ինքը այդ հարցը կդիտարկի քաղաքականությունից անջատ, և նախագահը կասի այն, ինչ իրողությունն է ու միջազգային իրավունքի պահանջը:

- Եթե ներկա պահանջը Ցեղասպանության ճանաչման հարցն է, անգամ Թուրքիայի կողմից, ապա, ըստ Ձեզ, ի՞նչ է լինելու, ի՞նչ է արվելու դրանից հետո:

- Տարբեր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը արդար պահանջ է, իրադարձությունների ճիշտ

գնահատում: Կարելուրն այսօր Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչումն է, մինչդեռ Թուրքիան համառորեն պնդում է, թե նման «երեւույթ» տեղի չի ունեցել: Այստեղ մեր անելիքն, առաջին հերթին, միջազգային դատարան դիմելու պատրաստումն է, որպեսզի 20-րդ դարակազմի ողբերգությունը միջազգայնորեն որակվի որպես Ցեղասպանություն:

Այդ պարագայում, բոլոր երկրները, այդ թվում՝ Թուրքիան, հաշվի կնստեն միջազգային դատարանի որոշման հետ՝ երեւույթը գնահատելով այնպես, ինչպես եղել է: Թուրքիայի ճանաչումից հետո պիտի արվեն նոր քայլեր: Քանի որ Թուրքիայի քաղաքականության հետեւանքով հայրենագրվել է մի ամբողջ ժողովուրդ, ոչնչացվել նրա մշակույթը, մեկուկես միլիոն անմեղ մարդիկ զոհ են գնացել այդ զազանություններին, ուստի այդ նույն միջազգային իրավունքի հիման վրա Թուրքիան պետք է կրի իր պատասխանատվությունը: Դրանում կարող են լինել եւ բարոյական հարց, եւ տարածքային, եւ այլ իրավունքներ, որոնց հիման վրա կորվի փոխհատուցման խնդիր, որ հմարավորություն կտա ապահովելու պատմական հայրենիք վերադառնալու ցանկությունն ունեցողների վերադարձը:

Իսկապես, այսօր ամենակարելուր հարցը մեր հետագա քայլերը նախապատրաստելն է: Ռուսաստանի հայերի միությունը եւ Համաշխարհային հայկական կոնգրեսը բավականին աշխատանք են տարել այս առնչությամբ:

- Դեռեւս տարիներ առաջ, պրն Աբրահամյան, Ձեր ղեկավարած կառույցները Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին ներկայացրին Ցեղասպանության հարցով միջազգային դատարան դիմելու առաջարկը: Ի՞նչ է, ըստ Ձեզ, փոխվել ցայսօր Ցեղասպանության հարցով դատարան դիմելու մոտեցման մեջ:

- Երեք տարի առաջ հատուկ Ցեղասպանության հարցերով մեր փորձագետների խմբի առաջ մեկ խնդիր էր դրված. ի՞նչ անել, երբ որոշ երկրներ ընդունում են պատմական փաստը, մյուսները՝ ոչ, և անկախ ամեն ինչից՝ ի՞նչ անել ճանաչումից հետո: «Ի՞նչ անելու» պատասխանը երեք տարի առաջ էլ, հիմա էլ նույնն է մեզ համար. մենք պիտի դիմենք միջազգային դատարան: «Մենք» ասելով պետք է հասկանալ Հայաստան պետությունը, քանի որ ՀԿ-ները դատարան դիմել այդ հարցով չեն կարող:

Ռոբերտ Քոչարյանին ուղարկված նամակում ներկայացրել էինք, մեր ընկալմամբ, նաեւ հետագա քայլերը: Այս նամակը ուղարկվել էր ԱԳՆ, որտեղից մեզ պատասխանեցին, թե դեռեւս ժամանակը չէ դատարան գնալու: Մենք բավարարված չենք այդ պատասխանով: Մենք ունենք իրավաբանների գնահատականներ, փորձագետների եզրակացություններ ու դատարան դիմելու առնչությամբ նամակը Հայաստանի նախագահին էնոցիայի արդյունք չէր, այլ կատարված աշխատանքի ու խորհրդակցությունների եզրակացություն: Դա մի հսկայական ինստիտուտի աշխատանքի արդյունք էր: Հիմա էլ գտնում ենք, որ պետք է պատրաստվել ու գնալ դատարան: Մենք իրատարակել ենք 25 հզ. փաստաթուղթ ներառող եռահատորյակ, որում օգտագործվել են 40 երկրների արխիվների նյութեր: Կան էլի շատ փաստաթղթեր, որ մեր ձեռքը չեն ընկել, մինչդեռ պետք է աշխատել դրանց իրապարակման ուղղությամբ եւս:

- Արդյոք հիմա ժամանակը չէ՞ դատարան դիմելու՝ ելնելով Արրիայում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի այն

հետտրական հարցադրումից, թե «ե՞րբ եւ որտե՞ղ է հայերի Լյուրնբերգը»:

- Մենք նախատեսել ենք մոտ ժամանակներս Մոսկվայում անցկացնել Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով՝ փորձագետների, իրավաբանների, հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, պետական իշխանության ներկայացուցիչների մասնակցությամբ, քննարկումների արդյունքում մշակել միջազգային իրավունքի սահմաններում պահանջվող փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր կլինի դիմել միջազգային դատարան: Սա բնավ էլ հեշտ գործ չէ, թեև մենք նյութեր ունենք, բայց, այնուամենայնիվ, պետք է նաեւ մշակել այդ քայլի իրականացման մեխանիզմները: Եվ այդ արդյունքների հիման վրա էլ ուզում ենք կրկին դիմել Հայաստանի նախագահին՝ առաջարկով, որ համապատասխան ընթացք տրվի նախաձեռնությանը:

- *Ցեղասպանության հարցը, ուզենք թե չուզենք, փորձում են կասել հայ-թուրքական գործընթացի հետ, որ, ինչպես գիտեք, արձանագրությունների վավերացման առումով կասեցված է: Արդյո՞ք արձանագրությունների վավերացման կասեցման Հայաստանի նախագահի որոշումը լրացուցիչ հնարավորություններ է տալիս Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար:*

- Հայաստանի նախագահի ուղերձի ու դրանում արտահայտված մտքերի առնչությամբ, թյուրըմբռնելով ուղերձի իմաստը, ինձ երբեմն ասում են, թե դա պարտություն է: Բայց եթե փորձենք հավատալ դրան, հրճվելու ոչինչ չկա, քանի որ եթե երկրի նախագահը պարտություն է կրում, դա բոլորի պարտությունն է: Սակայն լուրջ վերլուծելու դեպքում հստակ է, որ նախագահի այդ քայլը լիովին արդարացված է: Ավելին, ես կասեի, որ վերջին մեկ տարում Հայաստանի նախագահի վարած քաղաքականությամբ ոչ թե Ցեղասպանության հարցը կասկածի տակ դրվեց, ինչպես ոմանք պնդում էին, այլ, ընդհակառակը, ստեղծվեց նոր առիթ ու հնարավորություն բարձրացնելու Ցեղասպանության ճանաչման խնդիրը նոր մասշտաբներով:

Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից հայ-թուրքական գործընթացի նախաձեռնումը, կարծում եմ, շատ ճիշտ քայլ էր, որին, ինչպես կյանքը ցույց տվեց, Թուրքիան դեռեւս պատրաստ չէր: Նույն այդ հայ-թուրքական գործընթացը մեծապես ազդեցություն ունեցավ հենց Թուրքիայում Ցեղասպանության հարցի բարձրաձայնման առումով՝ ի հակառակ թուրքական իշխանությունների. այս տարի առաջին անգամ Թուրքիայում մտավորականության այդքան մեծ թվով ներկայացուցիչներ հարգեցին 20-րդ դարի առաջին Ցեղասպանության զոհերի հիշատակը: Այս ամենը մեկ անգամ եւս վկայում է, որ Հայաստանի նախագահը ապացուցեց երկխոսության մեր պատրաստականությունը, ու մեզինից յուրաքանչյուրն էլ մեր տեղում պետք է գործն այնպես առաջ տանի, ինչպես նախագահը:

- *Անկախ ամեն ինչից, 95-րդ տարելիցը անցավ ու գալիս է Ցեղասպանության 100-ամյան: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է անհրաժեշտ անել մինչև 100-րդ տարելիցը կամ ի՞նչ է հնարավոր անել:*

- Իսկապես, հարցը տեղին է. անցավ 95-րդ տարելիցը: Հարյուրամյակի տարելիցի նախապատրաստումն ու նշումը պետք է կազմակերպենք այնպես, որպեսզի այն նոր խթան հանդիսանա Ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների վերացման հարցում աշխարհի առաջավոր

ուժերի համախմբման համար: Ցեղասպանության քարոզչության հարցն ու լրբիստական աշխատանքը 100-ամյա տարելիցին նախապատրաստելու ամբողջ ժամանակահատվածում պետք է դրվի մեր բոլորի գործունեության օրակարգում: 100-ամյա տարելիցին պետք է գնալ քայլ առ քայլ, լուծելով բոլոր խնդիրները, այդ թվում՝ բոլոր ուժերով պատրաստվելով միջազգային դատին:

Մեր կառույցները կշարունակեն աշխատել: Նախ, արդեն իսկ ստեղծված հատուկ հանձնաժողովի միջոցով կընտրվեն ու կթարգմանվեն Ցեղասպանությանն առնչվող տարբեր փաստաթղթեր եւ կիրառարկվեն, ինչը նոր հնարավորություններ կստեղծի պատմական ճշմարտությունը տարածելու համար: Կարծում եմ, որ մենք պետք է շարունակենք նաեւ փաստավերագրական եւ գեղարվեստական ֆիլմերի ստեղծումը տարբեր լեզուներով, որպեսզի իրականությունը հասցնենք տարբեր ազգությունների ներկայացուցիչներին, հասկանալու, թե ինչ է Հայոց ցեղասպանությունը:

Շատ կարեւոր է, որ մենք Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներում զգացմունքային հարթությունից տեղափոխվենք կառուցողական հարթություն՝ ողջ գործընթացը նվիրաբերելով Հայաստանի հզորացմանը, տնտեսական առաջընթացին: Իրատեսական գնահատելով վիճակը՝ ՌՀՄ եւ ՀՀԿ երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան հանդես է եկել «Ամենը նահատակի հիշատակին» նախաձեռնությամբ՝ առաջարկելով մինչև 2015 թիվը երիտասարդության ուժերով Հայաստանում տնկել 1,5 մլն ծառ, որը կդառնա Ցեղասպանության յուրաքանչյուր զոհի բարոյական հոգեհանգստի արարողություն: Շարժումն արդեն ստացել է կյանքի ուղեգիր:

Նախաձեռնություններ շատ կան, որոնց զուգահեռ մենք մշակում ենք նաեւ 100-րդ տարելիցի միջոցառումների ծրագիրը, որ առաջիկայում կիրառարկվենք:

ԱՂԱՎՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թուրքական հերթական նկրտումների մասին

Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն Նախիջևանի Մեջլիսի նախագահի հետ հանդիպմանը հայտարարել է, թե Թուրքիան միշտ հետաքրքրվել է Նախիջևանով: Նա ասել է, թե Կարսի պայմանագիրը մնում է ուժի մեջ, որով Թուրքիան համարվում է Նախիջևանի անվտանգության երաշխավորը: Նախիջևանի անվտանգությունը Թուրքիայի անվտանգությունն է, հայտարարել է Դավութօղլուն: Lragir.am 28.04.2010

Սա առաջին դեպքը չէ, երբ մեր հարևան երկրի արտգործնախարարն աչքի է ընկնում բացառիկ երևակայությամբ: Նա հաճախ բաներ է տեսնում, որոնք իրականության մեջ չկան: Պնդումը, որ «Կարսի պայմանագիրը մնում է ուժի մեջ, որով Թուրքիան համարվում է Նախիջևանի երաշխավորը» դրանց թվից է: Քանի որ Կարսի պայմանագրի (յ)վավերականության և (ան)օրինականության հարցին առիթներ ունեցել եմ անդրադառնալու,¹ այսու անդրադառնում միայն պնդման երկրորդ մասին. «...Թուրքիան համարվում է Նախիջևանի երաշխավորը»:

¹ Արա Պապյան. Կարսի պայմանագիրն ու ՀՄՄՀ իրավական կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի: «Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները» հոդվածներ ժողովածու: Երևան, 2007, էջ 23:

Կարսի, այսպես կոչված, պայմանագրի նման մեկնությունը միանգամայն հիմնագործի է: Նախ տեսնենք ի՞նչ է սակավ Կարսի, այսպես կոչված, պայմանագրի մեջ: Գրում են «այսպես կոչված», քանզի այն ընդհանրապես պայմանագիր չէ, որովհետև չի կնքվել միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, այլ գործարք է 2 հրացանավոր-հանցավոր քաղաքական ուժերի՝ բոլշևիզմի և քեմալիզմի, միջև: Իշխանությունն ապօրինաբար բռնազավթած և իշխանության բռնազավթմանը ձգտող ուժերի Կարսի գործարքն ամրագրող փաստաթղթի 5-րդ հոդվածում գրված է.

«Թուրքիայի կառավարությունը և Սովետական Հայաստանի ու Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ սույն պայմանագրի III հավելվածում նշված սահմաններում Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»²

[Article 5. The Turkish Government and the Soviet Governments of Armenia and Azerbaijan are agreed that the region of Nakhichevan, within the limits specified by Annex III to the present Treaty, constitutes an autonomous territory under the protection of Azerbaijan.]³ [Статья 5. Турецкое Правительство и Советские Правительства Азербайджана и Армении соглашаются, что Нахичеванская область в границах, указанных в приложении 3 настоящего договора, образует автономную территорию под покровительством Азербайджана.]⁴

Մինչև բուն հարցին անցնելն ուզում եմ ուշադրություն հրավիրել այն հույժ կարևոր հանգամանքի վրա, որ անգամ Կարսի գործարքով Նախիջևանի շրջանը չի հանդիսանում կամ համարվում Ադրբեջանի մաս, այլ միայն գտնվում է Ադրբեջանի «խնամակալության ներքո» (under the protection; под покровительством): Ընդհանրապես, ըստ միջազգային իրավունքի, «պրոտեկտորատը իրավական հարաբերություն է երկու պետությունների միջև» (Under International Law protectorate is the legal relation between two states):⁵ Այսինքն, դրանք երկու առանձին միավորներ են և միևնույն երկրի երկու մասերը չեն:⁶ Ինչպես, օրինակ, Թունիսը և Մարոկոն Ֆրանսիայի պրոտեկտորատներն էին, սակայն նրա մասը չէին կամ Եգիպտոսը բրիտանական պրոտեկտորատ էր, սակայն Մեծ Բրիտանիայի մասը չէր:

Նախիջևանի ԲՍՄՀ դրոշմ, որի վրայի հայերեն մակագրությունը վկայում է այդ վարչական միավորի հայկական եության մասին



Ակնհայտ է, որ Կարսի, այսպես կոչված, պայմանագրի 5-րդ հոդվածը կողմերից որևէ մեկին չի տվել երաշխավորի (guarantor) կարգավիճակ: Այդ հոդվածին մաս հանդիսացող 3 կողմերից երկուսը («Թուրքիայի կառավարությունը և Սովետական Հայաստանի... կառավարությունը») ունեն իրավահավասար կարգավիճակ: Հիշյալ հոդվածի մեջ ընդհանրապես չկա որևէ հանձնառություն, այլ միայն առկա է 3 կողմերի միջև համաձայնություն Նախիջևանի մարզի կարգավիճակի մասին: Այսինքն, սույն հոդվածն ամրագրում է կայացած, ավարտված պայմանավորվածություն, այլ ոչ թե ապառնի

² Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. Օ. Կիրակոսյան, Երևան, 1972, էջ 520:
³ Soviet Treaty Series, vol. I (1917-1928), ed. by. Leonard Shapiro, Washington, 1928, p. 136.
⁴ Документы внешней политики СССР, т. 4, Москва, 1966, с. 423.
⁵ Branimir M. Jankovic, Public International Law, New York, 1984, p. 90.
⁶ Ավելի հանգամանալից տե՛ս՝ Kamanda A. A Study of the Legal Status of Protectorates in Public International Law, Geneva, 1961.

պարտավորություն: **Երաշխավորող պայմանագրի էությունը՝ երաշխավորվող հանձնառությունն է (The substance of a guarantee treaty is the guarantee commitment):**⁷ Երաշխավորվող հանձնառության բացակայությունը գրկում է, անգամ մեծ ցանկության դեպքում, Կարսի, այսպես կոչված, պայմանագիրը դիտարկել որպես երաշխավորող պայմանագիր: Ընդամեն, երաշխավորող պայմանագրի մեջ պետք է հստակ լինի, թե ով ինչ է երաշխավորում: Օրինակ, Ազգերի լիգայի Կանոնակարգի (The Covenant of the League of Nations) 10-րդ հոդվածով կազմակերպությունը երաշխավորում էր իր անդամների տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող քաղաքական անկախությունը» (the territorial integrity and existing political independence): Մեր քննարկման հերոս Թուրքիան, Հունաստանի և Մեծ Բրիտանիայի հետ միասին, եռակողմ պայմանագրով (1959թ.) [հոդված 2-րդ]. «...երաշխավորում է[ր] Կիպրոսի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու անվտանգությունը» (...guarantee the independence, territorial integrity and security of the Republic of Cyprus):

Բերենք օրինակներ նաև մեր ժողովրդի պատմությունից: Հիշում եք Պարույր Սևակի անմահ ստղերը **Անդրեյի զանգակատուն**-ից.

Մեր արցունքի դեմ մի կում ջուր տվին,

16-ն այսպես մի կերպ շուռ տվին:

Աչքդ լույս լինի, դու օգտվեցիր թվաբանություն.

Աճեց քո 16-ը՝ դարձավ 61:

Այստեղ հիշատակված են 2 հայտնի պայմանագրերի՝ Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագրի (3 մարտի, 1878թ.) և Բեռլինի պայմանագրի (13 հուլիսի, 1878թ.) հայերին վերաբերող հայտնի #16 և #61 հոդվածները, որոնք, ըստ էության, երաշխիքային պարտավորություններ էին՝ հանձնառություններ բարեփոխումների համար: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը երաշխավորում էր Թուրքիայի ստանձնած պարտավորությունների կատարումը, այն է. «անհասպող կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից բխող բարեփոխումներ և բարեփոխումներ»: Ի դեպ, ուշադրություն դարձրեք «անհասպող» բառին, արդյո՞ք դա Ձեզ չի հիշեցնում «ողջամիտ ժամանակահատվածում» բառակապակցությունը: Բեռլինի պայմանագիրը գրեթե նույնպիսի երաշխիքներ է տալիս, սակայն այս անգամ երաշխավոր (guarantor) էին հանդես գալիս արդեն պայմանագիրը կնքած բոլոր պետությունները. «առանց հետագա հասպտման իրագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից բխող բարեփոխումներ և բարեփոխումներ ... իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառումը»: Այսինքն, վերոհիշյալ պայմանագրերում առկա էր ցանկացած երաշխավորող պայմանագրի (guarantee treaty) առանցքային հարցը՝ երաշխավորման առարկան:

Անփոփելով, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Թուրքիան չի կարող հանդես գալ որպես Նախիջևանի վարչական միավորի երաշխավոր, քանի որ բացակայում է դրա իրավական հիմքը: Կարսի, այսպես կոչված, պայմանագիրը նման իրավասությամբ չի օժտում Թուրքիային: Այնտեղ, ընդհանրապես, որևէ ամրագրված պարտավորություն չկա:
2. Կարսի, այսպես կոչված, պայմանագրով Հայաստանն ու Թուրքիան Նախիջևանի նկատմամբ ունեն նույնական իրավունքներ և պարտավորություններ:
3. Կարսի, այսպես կոչված, պայմանագիրը խոսում է Նախիջևանի պրոտեկտորատի մասին, որը 1923թ. ի վեր գոյություն

⁷ Georg Ress, Guarantee Treaties, Encyclopaedia of Public International Law, v II, North Holland, 1995, p. 634.

չունի: Ըստ այդմ, եթե մինչևիսկ Թուրքիան իրեն Կարսի բոլշևիկա-քեմալական գործարքով համարում է Նախիջևանի պրոտեկտորատի երաշխավորը, կրկնում ենք՝ առանց հիմքի, ապա Նախիջևանի պրոտեկտորատի լուծարումով, այսինքն Նախիջևանի Ինքնավար Սովետական Մոցիալիստական Հանրապետության ստեղծումով և ՄՍՀՄ կազմում պարզ ինքնավարություն դառնալով, ի չիք է դարձել նաև այդ հիմքը:

Արա Պապյան

29 ապրիլի, 2010թ.

Ի պատասխան ՀՅԴ պաշտոնաթերթի "Դրօշակ"-ի մի հոդվածի

Ս.թ. փետրվարին Դաշնակցության պաշտոնական մամուլ "Դրօշակ"-ում լույս է տեսել ոմն Հայկազուն Ալվրցյանի "Վասն տգիտության" հոդվածը՝ ի քննադատություն "Լուսանցք" թերթում վաղորոք լույս տեսած Ս. Լ. Մանուկյանի "Դաշնակցությունը, մասունականությունը եւ երիտ-թուրքականությունը" հոդվածի: Այդ կապակցությամբ Հայ ազգայնականների համախմբման (ՀԱՀ) Խորհուրդը հայտարարում է:

Հայ իրականության մեջ երկու կառույց կա, որ անընդհատ ու միալար խոսում են, թե ծառայել են հայությանն անվերապահորեն: Եվ այս կառույցները ոչ մի անգամ չեն խոսել իրենց սխալների (նաեւ՝ ճակատագրական) մասին (սրանց թվում է՝ անսխալական են): Անվիճելի է, որ այդ երկուսը՝ Հայ առաքելական եկեղեցին եւ Հայ հեղափոխական դաշնակցությունը, որոշակի դեր ունեցել են հայապահպանման գործում (խոսքը հատկապես սփյուռքյան հատվածի մասին է), իսկ թե ինչ վնասներ են տվել հայությանն այս կառույցները, արդեն լուսաբանվել ու հանրահայտ է այլևս: Եվ եթե մի օր հակակշռելու լինենք, թե սրանցից օգո՞ւտն է շատ եղել ազգին, թե՛ վնասը, հաստատ հօգուտ այս կառույցների չի լինի այդ հակակշռումը: Այս երկու "անսխալականի" պատճառով է, որ մենք՝ հայերս, մերթ ընդ մերթ կորցրել ենք մեր հայրենիքի տարածքները, երբեմնի հայահավատ ու հայաշունչ գորությունը եւ ենթարկվել ենք ցեղասպանությունների:

301թ. սկսած մշակութա-հոգե-մարմնական ցեղասպանության մասին Հայ ազգայնականների համախմբումն արդեն հանդես է եկել հրապարակավ ու փաստարկված հոդվածներով: ՀՅԴ-ի մութ անցյալի եւ ոչ պայծառ ներկայի մասին նույնպես եղել են հրապարակային փաստարկված պարզաբանումներ: Եվ դա վերաբերում է նաեւ 1915թ. (այդ ժամանակին նախորդած ու հաջորդած) իրադարձություններին, երբ ՀՅԴ-ն համագործակցելով երիտթուրքական ուժերի հետ հանուն "մասունական եղբայրության", հանուն սիոնիստա-պանթուրքիստական ծրագրերի իրագործման, կամա, թե ակամա մասնակցեց հայության (հատկապես՝ ֆիդայության) զինաթափմանը, եւ քաղաքական խարդավանքների հորձանուտում հայությանը կանգնեցրեց աղետալի փաստերի առաջ... Իսկ այսօր հենց դրանց քաղաքական ժառանգորդներն են ամենաշատը թմբկահարում Հայոց ցեղասպանության հարցը: Հուրա-քրիստոնեական կրոնի հետեւորդ (նույն է թե՛ Եհովայի հետեւորդ) եւ հուրա-մասունական կառույցի մի ոմն ժառանգորդ էլ՝ մի դաշնակցականիկ (համարյա՝ հոկտեմբերիկ), ահա այսօր փորձում է ՀՅԴ պաշտոնաթերթում պախարակել Հայ ազգայնականների համախմբման Խորհրդի անդամին եւ հայոց ցեղային գաղափարաբանությունն ու հավատը: Ջարմանալի չէ, քանի որ ՀՅԴ-ն Հայաստանում վաղուց վերածվել է մի "ինքնահավան ու շահութաբեր" քաղաքական խմբակի եւ պարզապես դեռ գոյատևում է

սփյուռքյան կառույցների նյութական ու գործնական միջոցների հաշվին և ոչ միայն...

Ժամանակին երիտթուրքերի սիոնա-մասունական եղբայրության հետ համագործակցած ՀՅԴ-ն մեր օրերում լինելով իշխանության մեջ, տնօրինելով որոշակի նախարարական ոլորտներ եւ այլ պաշտոններ, նույն միջազգային-մասունական ուժերի պատվերով ապագայնացրեց հայկական կրթահամակարգը, համարակալեց ազգը՝ օտարին տրամադրելով մեր ամբողջական տվյալները, եւ կատարեց այլ ապագային գործեր, իսկ հիմա ընդդիմադիր խաղալով փորձում է եւս մեկ անգամ կոծկել իր իրական դեմքը...

"Դրօշակ"-ի հիշյալ հոդվածում ոմն դաշնակցականը հպարտանում է Նժդեհով: Նա "մոռանում" է, որ Նժդեհը թքել-հեռացել է ՀՅԴ-ից (հետո ՀՅԴ-ն նրան արտաքսել է: Մեկ էլ Կոմկուսից "չէին կարողանում" հեռանալ, երբ հեռանալու դիմում էր գրվում, արագ հեռացնում էին...)" մասունա-բուլշևիկյան խաղերի համար (հատկապես Ջանգեզուրի պաշտպանության հարցում): Եվ այն, ինչ ասել է Նժդեհը Դաշնակցության մասին՝ մինչ ճանաչել-հեռանալը, այլևս օրինակ բերելու հիմքեր չունի: ՀՅԴ-ից հեռացած մյուս հսկաները՝ Անդրանիկը, Շահան Նաթալին եւ այլք, նույնպես գիտակցել են, որ իրենց տեղում չեն... Հատկապես հիշյալ երկուսը մասունա-երիտ-թուրքա-դաշնակցական խաղերը չհանդուրժեցին: Հրեից փեսա մասն Սիմոն Վրացյանով (Գրուզինով) հպարտ ՀՅԴ-ականները դեռ կարողանում են պատապարվել Նժդեհով, որին "կուսակցական" հալածանքների էր ենթարկում մասուն Վրացյանը: Կողմնորոշվել է պետք՝ կամ ազգային հայ Նժդեհը, կամ՝ մասուն Վրացյանը...

Այս կապակցությամբ Շահան Նաթալին ասել է, որ վրացյանները պիտի շարունակեն "արտաքսել", քանի իրենք չեն արտաքսված: Իսկ հակառակ Անդրանիկի զգուշացումներին՝ ՀՅԴ ղեկավարությանը հեռու մնալու երիտթուրքերից, Դաշնակցությունը միայն 1911թ. վերջապես ընդունեց, որ երիտթուրքերի հետ կնքված դաշինքը սխալ էր (ինչպես նշել է դաշնակցականիկն իր հոդվածում): Բայց դա էլ չօգնեց այդ կառույցին, քանի որ ՀՅԴ վերնախավը (Մատիսյան, Ջամալյան, Վրացյան, Փափազյան եւ այլք) նույնպես մասունական օթյակի անդամներ էին եւ այդպիսիք էլ մնացին: ՀՅԴ կանոնադրքում ասված է, թե որեւէ անդամ չի կարող անդամագրվել գաղտնի ուխտերի, առանց վերին մարմինների հավանության... Մա արդեն իսկ բացահայտ իրականություն է:

Հիշյալ հոդվածում ոմն դաշնակցականիկը փորձել է իր կազմակերպության պաշտոնաթերթը "արժեւորել" հայոց հավատի եւ ցեղային գաղափարաբանության անվանարկումներով: Երեւի հուրա-քրիստոնեական "հոգին" չէր խաղաղվի, եթե սա չխոսեր "մասունների եւ հեթանոսների կապի մասին", իհարկե առանց փաստարկների, որը չի էլ կարող լինել, իսկ ահա ՀՅԴ-ի դեպքում մենք կարող ենք նոր անուններ ու փաստեր հավելել:

Իսկ այն պնդմանը, թե հայ ազգայնական հեթանոսներին Արցախում տեսնողներ չեն եղել, կարճ ասենք, որ հեղինակը պիտի լիներ այնտեղ, որ տեսներ... իսկ եթե եղել ու չի տեսել, ուրեմն՝ կուսակցական հիվանդությամբ է տառապում ("միայն դաշնակցականների շնորհիվ փրկվեց Արցախը" եւ "ով դաշնակցական չէ՝ հայ չէ"): Երբ դաշնակցականները դեռ սփյուռքյան վայելքների մեջ էին եւ նույնիսկ 1990-ականներին բյուրոն դեմ էր արտահայտվում Հայաստանի անկախացմանը (թուցիկներ էին տարածվում հանրահավաքների ժամանակ), հայ ազգայնականների մեծ մասն արդեն ազգային-ազատագրական պայքարի մեջ էր եւ կոչվում էր հայ-ադրբեջանական համարվող սահմանների ամբողջ

երկարությամբ, նաև հանուն Նախիջեանի ազատագրման, հետո էլ՝ հենց Արցախի...

Հեղինակը նշել է, որ ՀՅԴ-ն առնչվել ու համագործակցել է հրեաթուրքական (երիթուրքական) մաստնների հետ, քանի որ նույն երկրում էին գործում... Դե, հիմա էլ Հայաստանում գործում են մաստնական, աղանդավորական, անբարոյական եւ այլ՝ "նույն երկրում" պետականորեն գրանցված եւ գործող կառույցներ...

Հավատավոր դաշնակցականը չի մոռացել "խայթել" նաև Հայ Աստվածներին եւ եհովապաշտի համառությամբ ասել է, թե մաստնների մահվան թվականը երեւի միայն մեր Աստվածներին է հայտնի: Ծիծաղելի այս հեգնանքին ի պատասխան միայն կասենք, որ այո՛, դա վստահաբար Հայ Աստվածներին հայտնի է, ինչպես բոլոր տխմարների, լամուկների, այլադավանների ու դրանց նմանների մահվան թվականները... Եվ իր "թեման" ավարտելով՝ եհովապաշտ հուդա-քրիստոնյա դաշնակցականը հայտարարում է, թե "այս խմորը դեռ շատ ջուր ունի քաշելիք", ինչը նորանոր խառնակություններ եւ պառակտումներ կծնի: Իսկ ի՞նչ կարող էր մաղձել ավելի քան 100 տարի ազգից վեր կանգնած ու ազգը խառնակություններով վաղուց պառակտած կառույցի այս "հավատավորը", ինչպես ասում են՝ իրենց իսկ հասցեն թողնելով վերջաբանում:

Իսկ ՀՅԴ պաշտոնաթերթին կոչ ենք անում՝ "հանուն Հայ դատի հազարավոր նվիրյալների թափած արյունը" չըսեփականաշնորհել, Հայ Աստվածներից չփախչել ինչպես չըհայերը, հանգիստ թողնել հավատքային, գաղափարախոսական ու գործնական պատճառներով դաշնակցությունից հեռացած Նժդեհին, կամ էլ՝ վերանորոգվել ըստ նրա ստեղծած ցեղակրոն-արիադավան ուսմունքի:

Հայ ազգայնականների համախմբման (ՀԱՀ) Խորհուրդ
22.04.2010թ.

Մշակույթ

Դասական ուղղագրությանը վերադառնալը՝ բանավեճի թեմա գրականագետների համար

ԵՐԵՎԱՆ, 21 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊԵՏ: Դասական ուղղագրությանը վերադառնալու խնդիրները քննարկեցին գրականագետները: «ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է, որ մեր երկրի պետական լեզուն հայերենն է՝ ոչ թե արեւմտահայերենը կամ արեւելահայերենը: Մեր ուղղագրությունը պիտի մեկը լինի, եւ այն պիտի լինի մեր դասական ուղղագրությունը», - բանավեճը բացեց գրականագետ Արթուր Անդրանիկյանը: Դասական ուղղագրությանը վերադառնալը նա կարելորեց երեք հիմնական պատճառներով: Նախ, ըստ նրա, այսօրվա ուղղագրությունը մեզ պարտադրվել է բոլշևիկյան վարչակազմի կողմից, երկրորդ՝ այն սեպ է հայաստանաբնակ հայի եւ սփյուռքահայերի միջեւ, եւ վերջապես, այն մի շարք բազմիմաստ բառերի թյուրըմբռնման պատճառ է: Գրականագետ, Մ. Մաշտոցի անվ.Մատենադարանի գիտաշխատող Վարդան Դերիկյանը հակադարձեց՝ ասելով, որ նախ՝ արդի ուղղագրությանը հասել ենք փոփոխությունների երկու մեծ փուլով:

Եթե դրանցից առաջինը պարտադրված էր, ապա երկրորդը գիտական աշխատանքի արդյունք էր: Իսկ ուղղագրության այս փոփոխությունները հասունացել էին դեռեւս նախքան «կարմիր» հեղափոխությունը, դրա մասին աշխատություն ունի նաև Դ.Աղայանը: Ըստ Վ.Դերիկյանի տվյալների՝ այսօր միայն Պարսկաստանում գործող չորս հայալեզու ամսագրեր սկսել են

լույս տեսնել արեւելահայերենով, նույն միտումն է նկատվում նաև ԱՄՆ-ում, այլուր, ինչը նշանակում է, որ «սփյուռքի հայերենն է սնվում Հայաստանից»:

«Ես հայտարարում եմ որպես Արցախում մեծացած մարդ, դասականի վերադարձը լուրջ սեպ կլինի Հայաստանի ու Արցախի, Հայաստանի ու Զավախքի միջեւ», - նկատեց նա: Ի պատասխան երրորդ նկատառման՝ Վ.Դերիկյանը փաստեց. «Մենք հավատը չենք կորցնում «հաւատ» չգրելու պատճառով, ոչ էլ մեր հույսն է նվազում, երբ «ոյս» չենք գրում, ու սիրո պակասն էլ «Սեր» չգրելուց չէ»: Ըստ նրա՝ մեր կրթության խնդիրները արդեն իսկ բավ են, դրանք նորերով ծանրաբեռնել պետք չէ: «Մյուսինակ քայլով համատարած անգրագիտության կամ, որ ավելի վատ է, տգիտության առիթ կտանք: Մասնավաճ, որ բավական շատ են նաև վիճելի հարցերը գիտական տեսանկյունից:

Վ.Դերիկյանի դիտարկմամբ՝ գրականությունը մեր կյանքի միայն մի ոլորտն է, այն էլ՝ ամեն գրող կարող է գրել եւ հրատարակել ինչպես կամենա: «Մեր խնդիրն է ցույց տալ այս կեղծ «գաղափարականության» անիմաստությունը, քանի որ արդեն որոշակի պարտադրանք է զգացվում ավանդական ուղղագրությանն անցում կատարելու առումով: Մենք պիտի մեր մասնագիտական հետաքրքրություններից վեր բարձրանանք եւ խոսենք իրականությունից: Իսկ մեր իրականության մեջ հիմա ավանդական ուղղագրությունը կիրակնօրյա դպրոցի ուղղագրությունն է», - նկատեց նա:

Մարզական

1952 թ. Հելսինկիի օլիմպիական խաղերին մասնակցեցին 6 սփյուռքահայ մարզիկներ: Իրանի բռնցքամարտի հավաքական թիմում ընդգրկված 6 մարզիկներից երեքը հայեր էին: Փորձառու Մանվել Աղասու հետ մեկտեղ բռնցքամարտիկների օլիմպիական մրցաշարին մասնակցող իրանահայ մարզիկներ Պետրոս Նազարբեկյանը և Արտաշես Մարգարյանը մրցանակային տեղեր չգրավեցին: Այս խաղերում սփյուռքահայ մարզիկներից ամենահաջող երայթ ունեցավ լողորդուհի Մերիլի Ստեփանյանը (ԱՄՆ), որը 4x100 մ. ազատ ոճի փոխանցալո՝ դի մրցումներում գրավեց 3-րդ տեղը և արժանացավ բրոնզե մեդալի: Նույն լողատարածության անհատական մրցումներում նա գրավեց 7-րդ տեղը:

1956 թ. իտալական Կորտինա դե Անպեցցո քաղաքում կայացած ձմեռային օլիմպիական խաղերին առաջին անգամ մասնակցեցին երկու հայազգի մարզիկներ, Իրանից լեռնադահուկորդ Բենիկ Ամիրյանը և Խորհրդային Միությունից մոսկվացի տափօղակով հոկեյիստ Գրիգոր Մկրտչյանը: Լեռնադահուկորդների մրցումներում Բ.Ամիրյանը առաջին վեցյակում տեղ չգրավեց: Խորհրդային Միության տափօղակով հոկեյի թիմի դարպասապահ Գ.Մկրտչյանը դարձավ առաջին հայ մարզիկը, որը նվաճեց օլիմպիական խաղերի չեմպիոնի կոչում ձմեռային մարզաձևերից:

1960 թ. օգոստոսի 8-ից - սեպտեմբերի 11-ը Հռոմում կայացած 17-րդ օլիմպիական խաղերին մասնակցեցին երկու ի- բանահայ մարզիկ բռնցքամարտիկ Վազրիկ Ղազարյանը և ծանրորդ Հենրիկ Թամրազը (Թամրազյանը): Վ.Ղազարյանը 63,5 կգ քաշային կարգի բռնցքամարտիկների մրցումներում մրցանակային տեղ չգրավեց, մինչդեռ ծանրամարտիկ Հ.Թամրազյանը գրավեց պարտավոր 4-րդ տեղը և արժանացավ օլիմպիական խաղերի դիպլոմի:

Իրանի մարզական պատվիրակության կազմում 1964 թ. Տոկիոյի 18-րդ օլիմպիական խաղերում առաջին անգամ հանդես եկավ իրանահայ մարզուհի Զուփիթ Գեորգյանը: Զ.Գեորգյանը առաջին սփյուռքահայ թեթև աթլետուհին է, որ մասնակցում էր այդ խաղերի սկավառակի նետման և գնդի հրման մրցաշարերին, սակայն մրցանակային տեղ չշահեց:

1964 թ. Ինստիտուտի ձևափոխման 9-րդ խաղերի հայազգի միակ մասնակից, իրանահայ մարզիկ Հովհաննես Մկրտումյանը ուժեղը չափերով լեռնադահուկորդների սրբնաջ վայրէջքի և հսկա դորասափի մրցումների, առաջին վեցակում տեղ չգրավեց:՝ Նա չորս տարի անց ելույթ ունեցավ նաև Գրենոբլի 1968 թվականի ձմեռային 10-րդ օլիմպիական խաղերին, սակայն մրցանակ ձեռք բերել չկարողացավ: 1972 թ. օգոստոսի 26-ից - սեպտեմբերի 11-ը Մյունխենում կայացած 20-րդ օլիմպիական խաղերին մասնակցեցին բուլղարահայ ծանրորդ Նորայր Նուրիկյանը, լիբանահայ աթլետ-տախի Արդա Կալպակյանը և իրանահայ բռնցքամարտիկ Վարդգես Պարսամյանը: Վերջինս պարտվեց և չկարողացավ պայքարել մրցանակային տեղերի համար, մինչդեռ Նորայր Նուրիկյանը նվաճեց օլիմպիական չնվաճելի կոչումը:՝

Հաջորդ 21-րդ օլիմպիական խաղերին (1976 թ. Մոնթրեալ, Կանադա), Իրանի հավաքական թիմերի կազմում ընդգրկված էին ֆուտբոլիստ Անդրանիկ Իսկանդարյանը և սուսերամարտիկ Սերժիկ Ասատուրյանը:՝ Իրանի ֆուտբոլի հավաքական թիմի կիսապաշտպան 11. Իսկանդարյանը ե խոցատուներորդ Ս. Ասատուրյանը մրցանակային տեղեր չգրավեցին:

Այսպիսով Իրանի հավաքական թիմերի կազմում 6 ամա- ուսյին և 3 ձմեռային օլիմպիական խաղերի մասնակցել են ի- րանահայ 12 մարզիկ, որոնցից մեկը կին (6 բռնցքամարտիկ, 2 լեռնադահուկորդ և մեկական թեղև աթլետախի, ծանրամարտիկ, սուսերամարտիկ և ֆուտբոլիստ):

Ամենաբարձր մարզական արդյունքը ցույց է տվել Հենրիկ Թամրազյանը՝ 1960թ. 17-րդ օլիմպիական խաղերի ծանրորդների մրցումներում գրավելով 4-րդ տեղը: Օլիմպիական խաղերի մասնակից իրանահայ մարզիկների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

ՕԼԻՄՊԻԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԽՄԱՆԱԿԻՑ ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ

Ազգանուն, անուն	Մարզանկ	Օլիմպիական խաղեր	Գրաված տեղերը	Տեղ չի գրավել
Հարությունյան Անդրո	բռնցքամարտ	1948, 14-րդ	-	1
Ազատի Մանվել	բռնցքամարտ	1948, 14-րդ 1952, 15-րդ	-	1
Նազարբեկյան Դիտորոս	բռնցքամարտ	1952, 15-րդ	-	1
Մարգարյան Արտաշես	բռնցքամարտ	1952, 15-րդ	-	1
Ամիրյան Բենիկ	լեռնադահուկ	1956, 7-րդ, ձմ.	-	1
Թամրազյան Հենրիկ	ծանրամարտ	1960, 17-րդ	4-րդ	-
Վազարյան Վահրիկ	բռնցքամարտ	1960, 17-րդ	-	1
Գևորգյան Ջուլիթ	թիև աթլետիկա	1964, 18-րդ	-	1
Մկրտումյան Հովհաննես	լեռնադահուկ	1964, 9-րդ, ձմ. 1968, 10-րդ, ձմ.	-	1
Քարամյան Վարդգես	բռնցքամարտ	1972, 20-րդ	-	1
Ասատուրյան Սերժիկ	սուսերամարտ	1976, 21-րդ	-	1
Իսկանդարյան Անդրանիկ	ֆուտբոլ	1976, 21-րդ	-	1

Շար. 2 եւ վերջ

Խոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Ղարախանյան Սիրակցի

Ահվազ քաղաք

Մինչեւ մերոնց տեղափոխվելը Ահվազ քաղաք, միջնակարգ ավարտած, անորոշ, մտահոգված, զինվորության ծառայությունը չավարտած, այսպես քանի-քանիների նման անգործ էինք, պարապ-սարապ:

Տասնը ութը տարիս լրացած, արդեն միջնակարգը ավարտած, պիտի զինվորական 2 տարվա ծառայության ավարտակազմը ներկայացնեի որեւէ գործատիրոջ մինչեւ ինձ աշխատանք տային, այդ պատճառով հենց զինվորության հայտարարված թվականին ներկայացա Մասչեղ Սուլեյմանի ամենամոտիկ քաղաքը Պարսկաստանի հարավային նահանգի կենտրոն Ահվազ քաղաքում եւ ինձ ներկայացրի զինվորական կենդրոնի ՌԻՍԱՆ ԶՈՐԹԻ բաժնին: 1961 թվից Պարսկաստանի կառավարությունը հիմնադրեց Ձինվորական Ուսման Զորք պարսկերենով «Մեփահ է Դանեշ», անգլերենով «Literacy Corps». Այդպես երիտասարդ զինվորականը երկու տարվա զինծառայության փոխարեն, 6 ամսյա ռազմական/ ուսուցչական կրթություն կստանար եւ գյուղերում

ուսուցչությամբ կծառայեր, եւ այդպես գյուղերի փոքրիկներինց սկսած կամաց կամաց ժողովրդին կրթություն կտար:

Պարզ էր կը նախընտրեի Նոր-Ջուղայի շրջանի Չարմահալ գավառի մի գյուղում կատարել նշված ծառայությունը, որ արդեն հայաթափ էր եղել: Գիտեինք որ հայ գյուղացին հայրուրավոր տարի հայրենիքի կարոտով, 1946-ի Ներգաղթի տարիներին Պարսկաստանի տարբեր գավառներից հայրենադարձվել էր: Բայց եւ այնպես հատ ու կենտ գյուղերում դեռ փոքրաթիվ հայություն մնացել էր Ներգաղթի կանգ առնելու պատճառով:

Սիրով եւ հարգանքով մորաքրոջս 7 հոգանոց ընտանիքը սիրով ցանկություն հայտնեցին, որպեսզի իրենց մոտ մնայի մինչեւ 15 օր անց զինվորության վիճակս պարզվեր եւ պարտաւոր չլինեի երկրորդ անգամ հետ վարադառնալ: Ուրեմն 15 օրից պիտի ինձ ներկայացնեի, որ տեսնեի զինվոր կզմայի թէ ոչ, ո՞վ գիտեր թե հավանաբար վիճակահանության ընթացքում անունս դուրս կմնար եւ զինվորություն չպետք է գնայի, սակայն զինվորության հայրտական վկայական պիտի կստանայի եւ կսկսեի աշխատանք փնտռել. ուստի համոզվեցի մնալ 15:

Ահվազ քաղաքում հենց ՔԱՐՈՒՆ գետի արեւելյան մասում, մորաքրոջս ընտանիքի նման մի քանի հայ ընտանիքներ էին ապրում որոնք ունեին իրենց սեփական գործը եւ Նավթային ԸՆկերության հետ որեւէ կապ չուներին: Ասեմք թէ Մասչեղ Սուլեյմանի Նավթային ԸՆկերությունը Ահվազ քաղաքի հյուսիսում մի բաց անապատում «Քարուն» գետից մի քիչ հեռու իր կենդրոնական շենքն էր պատրաստել եւ իր գրագիր ու բանվոր դասակարգերի համար Ահվազ քաղաքից դուրս բայց ոչ հեռու տարբեր դասակարգերի համար շենքեր էր կառուցել այնպես, որ այս ամենը ազդեցություն չուներ Ահվազ քաղաքի եւ ժողովրդի ապրելակերպի վրա եւ Մասչեղ Սուլեյմանի դասակարգային խտրությունները այնքան զգալի չէին բայց եւ այնպես Նավթային ԸՆկերությունը ուներ իր դասակարգային ակունքները, սինեմաները եւ ԸՆկերության զանազան ապրանքներների եւ ուտելիքների առանձին խանութները: Էլի բանվորներին փայտե աթոռներով ավտոբուսներ էր հատկացվել իսկ գրագրներին փափուկ կաշվից պատրաստված աթոռներով: Ահվազ քաղաքում մի նորություն նկատելի էր որ հույս էր ներշնչում եւ այդ նորանոր Ամերիկյան եւ Եվրոպական հաստատություններ էին: Խոսքը չնոռանանք որ այդ 15 օրվայ սպասողական սրտատրոփ վիճակում մորաքրոջս տան շրջակայքում հայ տղաների էի փնտրում, դրացիներից շատերը պարսիկ ընտանիքներ էին կամ էլ խանութներ. օրինակ 24-Մեթրի փողոցը (պարսկերենով բիստ օ չահար մեթրի փողոց) ցածից գլուխ միչեւ ՔԱՐՈՒՆ գետի կամարով կամուրջը գրեթե լրիվ անձնական խանութներ էին, մեծ թվով ավտոմեքենաի նորոգման համար եւ աչքի ընկնող մեծ հաստատություններ աչքի չէին ընկնում:



Վահիկ Բաղդասարյան